

մանը, որ առաջադրված են ՄԱԿԹ XXXI համադրումարի կողմից քննարկված մեր պարտիայի նոր Մրադրում:

Մեր Հայրենիքի համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթանակները մարքս-լենինյան ուսմունքի հաղթարշավն են: Հասկապես քննարկում, պատմական հրահայտված նշանակություն ունեցող ժամանակաշրջան հանդիսացավ մեր երկրի հզոր առաջընթացի վերջին տասնամյակը: ՄԱԿԹ XX, XXI և XXXI համադրումների պատմական որոշումները, Ստալինի պաշտամունքի մերկացումը և նրա հետևանքների համարձակ վերացումը զարգացման ու սխրանքների նոր հորիզոններ բացին սովետական հերոս ժողովրդի առջև: Պիտոյան ու անխնայի նոր վերելքը, հզոր էկոնոմիկայանների ու գործարանների կառուցումը, հանքահորերի շահագործումը, ատոմային էներգիան մարդկության բարորությունն և

սպաս դնելու և տեղեկական տարածությունների նվաճման գործում ձեռք բերված խոշոր հաղթանակները, կոմունիստական աշխատանքի մասսայական շարժման ծավալումը և սովետական մարդկանց մյուս հայրենանվեր գործերը վկայում են մեր Հայրենիքի վիթխարի հաջողությունների մասին՝ կոմունիզմի ծավալումն կառուցման ժամանակաշրջանում:

Իր հարազատ կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, խաղաղ-ստեղծագործ աշխատանքով խանդավառված՝ սովետական ժողովուրդը այսօր ի տես աշխարհի ավելի բարձր ու հաղթականորեն է ծածանում Մեծ Հոկտեմբերի, կոմունիզմի անպարտելի դրոշմ, աշխարհի վրա անշեղի տառերով գրված է՝ «խաղաղություն, աշխատանք, ազատություն, հավասարություն, եղբայրություն ու երջանկություն բոլոր ժողովուրդների համար»:

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

Այս տարվա հոկտեմբերին ադրբեջանական ժողովուրդը, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, տոնեց իր մեծ գաղակ Միրզա Ֆարսլի Ախունդովի ծննդյան 150-ամյակը: Այդ հորեյանը, հաղադության համաշխարհային խորհրդի որոշմամբ նշվեց նաև միջազգային մասշտաբով:

Մ. Ֆ. Ախունդովը պատկանում է այն գործիչների թվին, որոնց գրական-հասարակական գործունեությունը մի ամբողջ դարաշրջան է կազմում իրենց ժողովրդի մշակույթի պատմության մեջ և զբաղում իսկ ծառայում համաշխարհային քաղաքակրթությանը: Ինչպես ճիշտ կերպով նկատել է սովետահայ անվանի գրող Գ. Գեմիքճյանը, «իսկական մեծ գրող էր Միրզա Ֆարսլի Ախունդովը՝ իր ժողովրդի հարազատ որդին, ադրբեջանական գրականության խոշորագույն կյանակր, համաշխարհային կուլտուրայի պայծառ ղեկերից մեկը: Ախունդովը նրանով եղավ հարազատ բոլոր ժողովուրդներին, որ ամենից առաջ հարազատ եղավ իր ժողովրդին»:

Անդեհահատելի են այս տեսակետից Մ. Ֆ. Ախունդովի ծառայությունները ադրբեջանական ժողովրդին: Որպես ադրբեջանական գրամասնորդիայի, ռեալիստական արձակի, գրական լինապատության հիմնադիր, որպես լուսավորիչ-ղեկավար ու մատերիալիստ-փիլիսոփա, Մ. Ֆ. Ախունդովը մեծ դեր է կատարել ադրբեջանական և քնդհանրապես արևելյան իրա-

կանության մեջ: Իր գրական, գիտական և հասարակական գործունեությամբ Մ. Ֆ. Ախունդովը ծառայել է ժողովրդական մասսաների ազատության և լուսավորության մեծ պայքարին: Նա խիզախորեն կռվել է բռնության ու խավարի, կրոնամոլության ու ֆանատիզմի դեմ: Նրա երկերում արտացոլված են իր դարաշրջանի առաջավոր, լուսավորական-ղեկավարական գաղափարները:

Մ. Ֆ. Ախունդովը գրական առաջարկ է մտել XIX դարի 40-ական թվականներին, իրեն բանաստեղծ, նա դրել է շուրջ 50 թեմաներ, մոխրամազներ, բասիդներ, էպիգրամներ, չափածո նամակներ: Սակայն նրա պոեզիայի գարգը հանրածանոթ «Արևելյան պոեմն» է, որը գրված է 1837 թ., Ա. Ս. Պուշկինի ողբերգական մահվան առթիվ: «Ժամանակի ուսական մամուլը «Արևելյան պոեմը» համարել է «մի սրանչիկի ծագկեփունջ, որ Մ. Ֆ. Ախունդովը գրել է Պուշկինի գերեզմանին»:

Մ. Ֆ. Ախունդովի գրական տաղանդը ծաղկեց և մի առանձին ուժով փայլեց հատկապես թատերգության մեջ, 1850—55 թթ. նա գրեց վեց կատակերգություն՝ «Մուլլա Իրրահիմ Խալիլ ալ-Խիմիդի», «Մուլլա Բորդանի և ղերվիշ Մուսթաֆի շահր», «Էլենքորանի խանի վեզիրը», «Հաջի Կարան», «Էվազակին հաղթող արջը» և «Գառապաշտպանները»: Իր այս երկերում Մ. Ֆ. Ախունդովը ռեալիստական գույներով արտացոլել է ադրբեջանական ժողովրդի կյանքը,

հրաժեշտներն ու դավերը, պատկերել է ֆեոդալական, հետամնաց երկրի հասարակական-քաղաքական հարաբերությունները: Ականավոր գրողը ծաղիկ ու ծանակի է նկարագրել աշխատավոր ժողովրդին հարստահարող ու թալանող քաղաքական շինովնիկներին ու բեկերին, վաշխառուներին ու դատավորներին, սուր և մահացու գրչով մերկացրել սառը ու կեղծարար բախտախնդիր ալքիմիկոսներին, մոլլաներին ու գերվիշներին:

ԱՆԺ գրամատուցող միաժամանակ գովերգում է ժողովրդի ընտանրության ու սովորությունների լավագույն կողմերը՝ աշխատասիրությունն ու արիությունը, խմաստությունն ու խաղաղասիրությունը: Նա փառաբանում էր ազնիվ աշխատանքը, մարտը ու նվիրական սերը: Անջնջելի տալավորություն են թողնում նրա կերտած գրական կերպարները՝ խմաստուն բանաստեղծ Հաջի Նուրին, քաջ սիրահար Բայրամը, ազնիվ ու աշխատասեր գյուղացիներ Առաքելն ու Մկրտիչը, խելոք ու համարձակ Թուրաղն ու Սաքինա խանումը և շատ ուրիշներ: Այս կերպարների լեզվով խոսում էր ինքը՝ հայրենասեր գրողը, նրանց մեջ տեսնելով երկրի և ժողովրդի հույսն ու ապագան: Աղբյուրահանական գրականության պատմության մեջ Մ. Ֆ. Ախունդովն առաջին գրողն էր, որ կերտեց իր ազնիվ նպատակների համար բռնության ու անարդարության դեմ մարտնչող աղբյուրահանի նախնաց կերպարները: Նրա կատակերգությունների շնորհիվ 1873 թ. հիմնադրվեց աղբյուրահանական ուսուցողական թատրոնը:

Մ. Ֆ. Ախունդովը հանդիսանում է աղբյուրահանական ուսուցողական արձակի հիմնադիրը: «Խաբված աստղեր» ստեղծագործության մեջ մեծ գրողը այրող երգիծանքով մերկացրեց բուրժուական կտրգերը: Նա հանդիսանում է նաև աղբյուրահանական գրաքննադատության հիմնադիրը: Նրա գեղագիտական սկզբունքները հանդամանորեն շարադրված են «Պոեզիայի և արձակի մասին», «Քննադատական գիտություններ», «Բարձր Իրանի «Միլլեթ» թերթի խմբագրին», «Միրզա Մելքում-խանի պիեսների քննադատությունը» և ուրիշ հոդվածներում ու նամակներում, որոնց մեջ ականավոր մտածողը հանդես էր գալիս իբրև ուսուցողական գրական ուղղության հետևողական պաշտպան:

Միրզա Ֆաթալի Ախունդովը մատերիալիստ-փիլիսոփա էր և մեծ լուսավորիչ-դեմոկրատ: «Քննադատությունների նամակներ», «Ներկայումս»-ի քննադատությունը, «Պատասխան անգլիացի գիտնական Յումին», «Բարբիզի ժողովրդական մասին» և այլ մեծածախ փիլիսոփայական աշխատություններում Մ. Ֆ.

Ախունդովն անդրադարձել է իր ժամանակաշրջանի հուզող հարցերին: Խորապես ծանոթ լինելով Իրանի, Հնդկաստանի, արաբական երկրների և ընդհանրապես Արևելքի ներքին ու արտաքին կյանքին, պետական ու կրոնական օրենքներին, նա մեծ հմտությամբ մերկացրել է Իրանում և արևելյան այլ երկրներում տիրող ճնշումն ու բռնությունները, իրավադրությունն ու թշվառությունը, խավարն ու հետամնացությունը:

Որպես աթեիստ, Մ. Ֆ. Ախունդովը ժխտում էր առհասարակ բոլոր կրոնները՝ սկսած իսլամից մինչև քրիստոնեությունը: «Ես բոլոր կրոնները համարում եմ փուչ և առասպել», — ասում էր նա:

Մ. Ֆ. Ախունդովը առաջին աղբյուրահանական գրողն ու մտածողն էր, որ համարձակորեն մերժեց արաբական դժվարագույն «այրուբենը, կազմեց նոր այբուբենի իր նախագծերը և ամբողջ կյանքում պայքարեց դրանց իրագործման համար:

Միրզա Ֆաթալի Ախունդովը ժողովուրդների եղբայրության մեծ դրոշակակիրն էր և հետևողական պրոպագանդիստ: Նա խոշոր գեր է կատարել աղբյուրահանական գրական և հասարակական միտքի ինտերնացիոնալիստական գաղափարներով՝ ի պնդելի հարստացնելու ապարեզում: Մ. Ֆ. Ախունդովը աղբյուրահանական առաջին մեծ գրողն ու մտածողն էր, որն իր թե՛ գեղարվեստական և թե՛ փիլիսոփայական-գրականագիտական երկերում փայլուն կերպով արտացոլեց ժողովուրդների բարեկամության սոցիալ-քաղաքական էությունը, հանդիսացավ այդ բարեկամության ճշմարիտ դրոշակակիրը: Ժողովուրդներին շահագործողներն ու կեղերողները, ինչ ազգության էլ պատկանեն նրանք, բոլոր խաներն ու բեկերը, փաշաներն ու աղաները, թագավորներն ու վեզիրները, եվրոպական գաղութարարները հանդիսացել են մեծ հումանիստ-գրողի թշնամիները, որոնց դեմ ուղղված նրա ամբողջ ստեղծագործությունը:

Մ. Ֆ. Ախունդովը ազգերի եղբայրության հուրըր կապել է հայրենասիրության, քաջության, պատվի, արդարության և հավասարության գաղափարների հետ: Նա լավ գիտակցում էր, որ այնտեղ, ուր իշխում են բռնակալական կարգերը, բոլոր ժողովուրդները ենթարկվում են ճնշման, հարստահարման և կեղերման, հետևաբար տարբեր ժողովուրդների նույնանման գոյավիճակը պետք է մոտեցնի, մոտեցնի նրանց: Եվ ահա այս խնդիրները պարզաբանելու նպատակով Մ. Ֆ. Ախունդովը, առաջինը աղբյուրահանական գրականության մեջ, կերտում է հայ աշխատավորների կերպարները, խոսում հայ և աղբյուրահանի գյուղացիների սո-

ցիալ-քաղաքական նույնանման գոյավիճակի մասին:

Հայ ժողովուրդն իր հերթին միշտ բարձր է գնահատել աղբյուրական ժողովրդի ահա-նավոր զավակին: Մեծ բարեկամության հուզիչ օրինակ է Մ. Ֆ. Ախունդովի և Խ. Աբովյանի անձնական մտերմությունը, որը սրբազործված է եղել ազատության, լուսավորության և առաջադիմության համար մեզից պայքարի վե՛հ գաղափարներով: Մոտիկ բարեկամներ են եղել նաև Մ. Ֆ. Ախունդովը և Գ. Սունդուկյանը:

Մ. Ֆ. Ախունդովը սիրված և հանրաժանով գրող է դարձել հայ ժողովրդի համար հատկապես սովետական տարիներին: Նրա երկերը տպագրվել են հայերեն առանձին գրքերով, կատակերգությունները բեմադրվել հայկական բեմերում: Հայ ժողովուրդը բանից տեսել է մեծ գրողի հորելյանը: Համակողմանիորեն ուսումնասիրվել են նրա երկերը և բարձր գնահատականի արժանացել սովետահայ գրողների ու գրականագետների կողմից:

Ա. ԵՐԵՎԱՆԻ

* *

Սույն թվականի սեպտեմբերին լրացավ վրացականալոր գրող Դավիթ Կլդիաշվիլու ծննդյան 190-ամյակը: Դ. Կլդիաշվիլուն գրական ասպարեզ է իջել XIX դարի 90-ական թվականներին: Լինելով քննադատական ուսուցիչի խոշոր ներկայացուցիչներից մեկը վրաց գրականության մեջ, նա ստեղծել է մի շարք խորիմաստ և դժուար գեղարվեստական երկեր, որոնք հմայում են ընթերցողին թախծալի, նուրբ հումորով, դեպի մարդը տածած սիրով: Դ. Կլդիաշվիլին ճշմարտացիությամբ ցույց է տվել ֆեոդալական հասարակարգի դատապարտվածությունը, սպանիչ կերպով ծաղրել ազնվականության վերջին սերնդի հոգեկան դատարկությունն ու մտավոր աղքատությունը, և այդ ամենը պատկերել է ուսուցիչական այնպիսի գույներով, որ նրա երկերն իրավամբ դարձել են տվյալ ժամանակաշրջանը բնութագրող գեղարվեստական վավերագրեր:

Դ. Կլդիաշվիլու ստեղծագործության մեջ նշանակալից է «Մոր մխիթարությունը» պատմվածքը: Այստեղ հեղինակը պատկերում է միակ որդուն՝ ժողովրդի զործի համար մարտունակ մարտիկին կորցրած մոր հերոսությունը: Անասկիորեն տանջվելով ապրած վշտից, մայրը մխիթարվում է այն գաղափարներով, որոնց համար զոհվել է որդին: Նա երազում է այն օրերի մասին, երբ կիրականանան որդու ձգտումները. «Ծիշա է, մարդկության կյանքը ի՞նչ է վշտով... Բայց կգա երջանիկ օրը և կյանքից կանհետանա վիշտը... Ո՛չ մի ուժ, ո՛չ մի խոշրնդոտ չեն կարողանա կանգնեցնել նրա հաղթարշավը»:

Բացի պատմվածքներից ու վիպակներից. Դ. Կլդիաշվիլին գրել է նաև պիեսներ, որոնք համարվում են վրաց դասական դրամատուրգիայի լավագույն նմուշներից: «Ժրինայի երջանկությունը», «Բարխուպանի գժրախտությունը» և «Դժրախտություն» պիեսները այսօր էլ լայն տեղ են գտնում վրաց թատրոնի խաղա-

ցանկում: Ինչպես իրենց գաղափարական-թեմատիկ բովանդակությամբ, այնպես էլ գեղարվեստական արժանիքներով Դ. Կլդիաշվիլու պիեսները սերտ կապի մեջ են գտնվում նրա առձակի հետ: Դրանցում ևս պատկերված են նույն սոցիալական պրոցեսները և դատահանգիստն նույն գաղափարներն ու հասարակական ձգտումները, որոնք Կլդիաշվիլին վրացական կյանքի հիանալի կենցաղագրի ստեղծագործության բովանդակությունը:

Դ. Կլդիաշվիլին ուղղակիորեն կապված չի եղել բանվորական սեուլյուցիոն շարժման հետ, սակայն նա համակրել է բանվոր դատակարգին: Բնորոշ է, օրինակ, որ 1905 թվականին ռուսացիայի բազմաթիվ մասնակիցներ ուսուցիչական հետապնդումներից պատասպարվում էին Դ. Կլդիաշվիլու տանը: Նա գենը է մատակարարում պրոլետարիատին, մասնակցում բաթումիի աշխատավորության քաղաքական ցույցերից մեկին, որի համար պատասխանատվության է ենթարկվում և հեռացվում գինվորական ծառայությունից:

Դ. Կլդիաշվիլու ստեղծագործությունները լայն մասսայականություն են վայելում սովետական ընթերցողների շրջանում: Նրա մի շարք երկեր դարձել են հայ ընթերցասեր հասարակության սեփականությունը:

Դ. Կլդիաշվիլին բարեկամական կապերի մեջ է եղել հայ գրողների հետ: 1920 թ., երբ նշվեց նրա գրական գործունեության 30-ամյակը, հորելյանական հանդեսին կարդացվեց հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանի ողջույնի նամակը. «Իմ տաղանդավոր եղբայր Դավիթ,—գրում էր Թումանյանը,—ժողովուրդների մեծությունը հայտնվում է իրենց հոգևոր կուլտուրայի մեջ: Եվ ամեն մի ժողովրդի մեծության առաջին նշանը իր գրականությունն է»:

Վրաստանը՝ թե հնում, թե նոր ժամանակներում՝ իր գրականությունով միշտ եղել է առաջավոր ժողովուրդների շարքում:

Դուր, իմ պսակավոր եղբայր, եղև էր այն բնորյալներից մինը, որոնք նույնիսկ մայրենի լիրի ու գրականության հալածանքի օրերում բարձր են պահել վրաց ժողովրդի հոգևոր կարողության դրոշակը:

Մեծ երջանկություն է Ձեզ համար, երբ էսօր Վրաստանն է համբուրում Ձեր բարձր վաստակավոր ձևկառն ու օրհնում իր արժանավոր որդու աշխատանքը:

Վրաստանի ամեն մի ուրախ տոնը կենդանի արձագանք է տալիս եղբայրակից հայ ժողովրդի սրտերում և վրաց գրողի հաղթանակի տոնը ուրախության օր է հայ գրողի համար:

Էս զղացմունքով համակված՝ էսօր Ձեր գրական գործունեության հոբելյանին, և որ-

պես հայ գրողների ընկերության նախագահ՝ թե ընկերության կողմից և թե իմ կողմից ջանքն ողջունեմ հղում և լիասիրտ մաղթում եմ, որ Դուր էլի երկար, ավելի բարձր թնդացնե՞ր վրաց ազնիվ սրտի խոսքը՝ Ձեր մայրենի ժողովրդի մեծության և բնահանուր լուսավորության ու եղբայրության համար»:

Իր ղեղարկատական երկերով Դ. Կլդիաշվիլին հարստացրել ու զարգացրել է վրաց դասական գրականության ռեալիստական ու դեմոկրատական տրագիկաները, բարերար ազդեցություն ունեցել մայրենի գրականության հետագա զարգացման վրա:

Կ. ՏԻԳԲԱՆՅԱՆ:

ԳՈԿՏՈՐ ՉԱՐԼՁ ԴԱՌԱՆԹԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվրոպայում հայագիտության զարգացմանը իրենց նպաստն են բերում նաև անդլիացի հայագետները, ինչպես՝ Ուինստոն եղբայրները, Կոնիքները, Քեյլեն և ուրիշներ: Դրանց մեջ իր տասնամյա հայագիտական գործունեությամբ աչքի է ընկնում նաև քանասիրական գիտությունների ղեկավար, Լոնդոնի Արևելյան և աֆրիկյան լեզուների ինստիտուտի հայագիտության դասախոս Չարլզ Դաուսեթը:

Նա ծնվել է 1924 թ., 1943 թ. իբրև ուսանող սովորում է Սթոֆորդի համալսարանում՝ հաճախելով Ֆրանսիական գրականության դասընթացները: 1947 թ. ընդունվում է Քեմբրիջի համալսարանը, որտեղ հմտանում է համեմատական լեզվաբանության ու արևելյան լեզուների մեջ: Իսկ 1949 թ. ստանում է ժամանակակից և միջնադարյան ժողովուրդների լեզուների իմացության վկայական՝ առաջին կարգի պատվոգրով: Բանասիրության բնահանուր առարկայի և գիտական մեթոդաբանության յուրացման համար նա աշակերտել է գոհատրպրոֆեսոր Հ. Քեյլեին:

Իբրև հիմնական մասնագիտություն նախընտրելով հայագիտությունը, պրոֆ. Չարլզ Դաուսեթը 1950—1954 թթ. շարունակում է իր ուսումնասիրությունը այս անգամ Փարիզում՝ հաճախելով Արևելյան կենդանի լեզուների ազգային ինստիտուտի և կաթոլիկական ինստիտուտի դասընթացները և ստանում երկու վկայական՝ հայագիտության ու վրացագիտության վերաբերյալ: Այստեղ նա աշակերտում է հայագետներ Ֆրեդերիկ Ֆեյդին և Եսայ Մերսինին:

Բայց պրոֆ. Չարլզ Դաուսեթի համալստանի հասկանչական տարին լինում է 1954 թ., երբ Քեմբրիջում հայագետին ընդգնում է քանասիրական գիտությունների ղեկավարի կոչում՝ միջնադարյան հայոցի հայ մասնագիր Մովսես Կաղանկատվացու (Դասիսուրանցու) «Պատմություն Աղուանից» երկի ուսումնասիրության և անդլերեն փալլոս թարգմանության համար: Եվ նույն թվականին նա նշանակվում է հայագիտության դասախոս՝ Լոնդոնի համալսարանի Արևելյան և աֆրիկյան հետազոտությունների բաժանմունքում, որտեղ և շարունակում է պաշտոնավարել: Ուշագրավ է նաև, որ պրոֆ. Չարլզ Դաուսեթի ղեկավարությամբ Լոնդոնում հայագիտության բնագավառում հմտանում են մի շարք անդլիացի ուսանողներ:

Պրոֆ. Դաուսեթի համար երկար տարիների ցանկություն է եղել լինել Մովսեսական Հայաստանում:

Եվ ահա սույն թվականի շեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին պրոֆ. Չարլզ Դաուսեթը պաշտոնական հյուրն էր Մովսեսական Հայաստանի հայագիտության կարևորագույն կենտրոններից մեկի՝ Մաշտոցի անվան Մատենադարանի: Այդ օրերին անդլիացի հայագետը մեծ եռանդով աշխատում էր հայկական ձեռագրերի վրա, նյութեր բաղում իր հետագա ուսումնասիրությունների համար, լուսանկարում մեր մանրանկարչության լավագույն նմուշները, մատենագիրների դիմանկարները՝ հայագիտությունն ուսումնասիրող իր ուսանողներին ցուցադրելու մասդրությամբ, իսկ ազատ ժամ-